ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

12 փետրվարի 2016 թվականի **թիվ 13** քաղ. Մոսկվա

«Եվրասիական տնտեսական միության գազի ընդհանուր շուկայի ձեւավորման հայեցակարգի մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշման նախագծի վերաբերյալ

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի 2014 թվականի դեկտեմբերի 23-ի թիվ 96 որոշմամբ հաստատված՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի նիստերի անցկացումը կազմակերպելու կարգի 8-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհուրդը **որոշեց**.

1. Հավանություն տալ «Եվրասիական տնտեսական միության գազի ընդհանուր շուկայի ձեւավորման հայեցակարգի մասին» Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի որոշման նախագծին (կցվում է) եւ այն ներկայացնել Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի քննարկմանը:

2. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից 10 օրացուցային օրը լրանալուց հետո:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**
Վ. Գաբրիելյան	**Վ. Մատյուշեւսկի**	**Բ. Սագինտաեւ**	**Օ. Պանկրատով**	**Ի. Շուվալով**

ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

« » -ի 20 թվականի թիվ քաղ.

Եվրասիական տնտեսական միության գազի ընդհանուր շուկայի ձեւավորման հայեցակարգի մասին

«Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 83-րդ հոդվածի 2-րդ կետին եւ 104-րդ հոդվածի 4-րդ կետին համապատասխան՝ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը որոշեց.

Հաստատել կից ներկայացվող՝ Եվրասիական տնտեսական միության գազի ընդհանուր շուկայի ձեւավորման հայեցակարգը:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	Բելառուսի Հանրապետությունից՝	Ղազախստանի Հանրապետությունից՝	Ղրղզստանի Հանրապետությունից՝	Ռուսաստանի Դաշնությունից՝

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

Եվրասիական տնտեսական

բարձրագույն խորհրդի 201 թվականի

-ի թիվ որոշմամբ

ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

Եվրասիական տնտեսական միության գազի ընդհանուր շուկայի ձեւավորման

I. Ընդհանուր դրույթներ

Սույն հայեցակարգը մշակված է «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 83-րդ հոդվածի 2-րդ կետի իրագործման նպատակներով:

Սույն հայեցակարգն ուղղված է Եվրասիական տնտեսական միության անդամ պետությունների կողմից (այսուհետ համապատասխանաբար՝ Միություն, անդամ պետություններ) Միության գազի ընդհանուր շուկայի ձեւավորումն ապահովելուն, որը նախատեսում է՝

Միության գազի ընդհանուր շուկայի մասնակիցների միջեւ գազի փոխադարձ առեւտուր.

Միության գազի ընդհանուր շուկայի մասնակիցներին պատկանող եւ Միության գազի ընդհանուր շուկայում սպառողների մատակարարման համար նախատեսված գազի փոխադրում գազափոխադրման համակարգերով:

Միության գազի ընդհանուր շուկայի ձեւավորումը Միության շրջանակներում տնտեսական ինտեգրման անբաժանելի մասն է կազմում եւ ուղղված է անդամ պետությունների միջեւ ապրանքների, ծառայությունների, տեխնոլոգիաների եւ կապիտալների ազատ տեղաշարժի համար բարենպաստ պայմանների ապահովմանը:

Միության գազի ընդհանուր շուկայի ձեւավորումն իրականացվում է՝ հաշվի առնելով՝

միջազգային պայմանագրերով սահմանվող՝ անդամ պետությունների պարտավորությունները,

անդամ պետությունների գազի շուկաների գործունեության եւ զարգացման առանձնահատկությունները,

անդամ պետություններում գազի ներքին պահանջարկի առաջնահերթ բավարարումը,

անդամ պետությունների օրենսդրությունը,

գազի ընդհանուր շուկաների ձեւավորման միջազգային փորձը:

II. Սահմանումները

Սույն հայեցակարգի նպատակներով օգտագործվում են հասկացություններ, որոնք ունեն հետեւյալ իմաստը՝

գազի նկատմամբ ներքին պահանջարկ՝ անդամ պետություններից յուրաքանչյուրի տարածքում սպառման համար անհրաժեշտ գազի ծավալները.

անդամ պետության գազի ներքին շուկա՝ անդամ պետության տարածքում գազի փոխադրման եւ մատակարարման ոլորտում այն տնտեսավարող սուբյեկտների առեւտրատնտեսական հարաբերությունների ամբողջություն, որոնք գործում են անդամ պետության օրենսդրության հիման վրա.

գազ՝ գազանման ածխաջրածնի եւ այլ գազերի վառելիքային խառնուրդ, որն հիմնականում բաղկացած է մեթանից եւ տեղափոխվում է խտացված գազանման վիճակում՝ գազափոխադրման համակարգերով.

գազափոխադրման համակարգեր՝ շինություններ՝ գազի փոխադրման համար, ներառյալ՝ մագիստրալային գազատարների շինություններն ու

միասնական տեխնոլոգիական պրոցեսով դրանց հետ կապված օբյեկտները՝ բացառությամբ գազաբաշխման ցանցերի.

գազափոխադրման համակարգերի հասանելիություն՝ անդամ պետությունների բնական մենաշնորհի սուբյեկտների կողմից կառավարվող գազափոխադրման համակարգերի օգտագործման իրավունքի շնորհում՝ գազի փոխադրման համար.

ենթակառուցվածքային կազմակերպություններ՝ անդամ պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրման համակարգերի օպերատորներ եւ բորսային սակարկությունների օպերատորներ.

գազի փոխադրում եւ մատակարարում անդամ պետությունների միջեւ՝ գազի փոխադրում եւ մատակարարում մեկ անդամ պետության տարածքից մեկ այլ անդամ պետության տարածք.

Միության գազի ընդհանուր շուկա՝ անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների առեւտրատնտեսական հարաբերությունների ամբողջություն անդամ պետությունների միջեւ գազի փոխադրման եւ մատակարարման ոլորտում.

բորսային սակարկությունների օպերատոր՝ անդամ պետության տարածքում գազի մեծածախ բորսային առեւտրի իրականացման ծառայություններ մատուցող եւ անդամ պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրման համակարգերի օպերատորների հետ փոխգործակցության միջոցով տվյալ առեւտրի իրականացման ժամանակ կնքված պայմանագրերի կատարումն ապահովող իրավաբանական անձ.

գազափոխադրման համակարգի օպերատոր՝ գազափոխադրման համակարգի սեփականատեր հանդիսացող կամ այլ օրինական հիմքով գազափոխադրման համակարգին տիրապետող եւ գազափոխադրման համակարգի օպերատիվ-կարգավարական կառավարումը, գազափոխադրման համակարգով գազի փոխադրումն իրականացնող իրավաբանական անձ.

գազի մատակարարում՝ գազի փոխանցում գազ մատակարարողից սպառողին՝ համապատասխան պայմանագրով սահմանված պայմաններով.

գազ մատակարարող՝ անդամ պետությունների տարածքներում գազի մատակարարումն իրականացնող իրավաբանական անձ.

գազ սպառող՝ անդամ պետության տարածքում գրանցված եւ սեփական, արտադրական կամ այլ տնտեսական կարիքների համար գազ ձեռք բերող իրավաբանական անձ.

ազատ հզորություններ՝ անդամ պետությունների մագիստրալային գազատարների տեխնոլոգիապես հնարավոր ազատ հզորություններ, որոնք որոշվում են անդամ պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրման համակարգերի հասանելիության միասնական կանոններին համապատասխան.

Միության գազի ընդհանուր շուկայի սուբյեկտներ՝ Միության գազի ընդհանուր շուկայի մասնակիցներ եւ ենթակառուցվածքային կազմակերպություններ, որոնք ապահովում են Միության գազի ընդհանուր շուկայի գործունեությունը.

գազի փոխադրում՝ գազափոխադրման համակարգով գազի տեղափոխումն այլ գազափոխադրման համակարգեր՝ գազի ընդունման կետից մինչեւ հանձնման կամ փոխադրման կետը.

գազի փոխադրման հետ կապված ծառայություններ՝ գազափոխադրման համակարգերով գազի փոխադրման ծառայություններ.

Միության գազի ընդհանուր շուկայի մասնակիցներ՝ անդամ պետությունների տարածքներում գրանցված եւ անհրաժեշտության դեպքում անդամ պետության կողմից Միության գազի ընդհանուր շուկայում գազի մատակարարման եւ (կամ) գնման համար լիազորված գազ մատակարարողներ եւ սպառողներ:

Սույն հայեցակարգում այլ հասկացություններ օգտագործվում են Պայմանագրով սահմանված իմաստներով:

III. Միության գազի ընդհանուր շուկայի ձեւավորման նպատակները, սկզբունքները եւ խնդիրները

Միության գազի ընդհանուր շուկայի ձեւավորման հիմնական նպատակներն են՝

անդամ պետությունների էներգետիկ անվտանգության բարձրացում,

գազ սպառողների գազամատակարարման հուսալիության, հասանելիության եւ որակի բարձրացում անդամ պետությունների տարածքներում,

անդամ պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրման համակարգերի օգտագործման տնտեսական արդյունավետության բարձրացում:

Միության գազի ընդհանուր շուկայի ձեւավորումն իրականացվում է Պայմանագրի 79-րդ հոդվածի 1-ին կետում նշված էներգետիկ պաշարների ընդհանուր շուկաների ձեւավորման հիմնական սկզբունքներին համապատասխան եւ «Գազափոխադրման համակարգերով գազի փոխադրման ոլորտում բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների հասանելիության կանոնների, այդ թվում՝ գնագոյացման եւ սակագնային քաղաքականության հիմունքների մասին» արձանագրության 3-րդ կետում նշված՝ Միության գազի ընդհանուր շուկայի ձեւավորման հիմնական սկզբունքներին համապատասխան (Պայմանագրի 22-րդ հավելված):

Միության գազի ընդհանուր շուկայի ձեւավորումը հիմնվում է անդամ պետությունների գազի ներքին շուկաների զարգացման վրա եւ նախատեսում է՝

անդամ պետությունում գազի ներքին պահանջարկի ապահովում այդ անդամ պետության տարածքում, այլ անդամ պետությունների տարածքներում եւ անհրաժեշտության դեպքում երրորդ պետությունների տարածքներում արդյունահանվող եւ (կամ) ձեռք բերվող գազի պաշարների հաշվին, ընդ որում, գազի ծավալը, վաճառքի գինը եւ դրա փոխադրման ծառայությունների սակագները, ինչպես նաեւ գազի փոխադրման առեւտրային եւ մյուս պայմանները սահմանվում են անդամ պետության տնտեսավարող սուբյեկտների միջեւ

կնքված իրավաքաղաքացիական պայմանագրերով՝ անդամ պետության օրենսդրությանը համապատասխան.

անդամ պետության՝ կանոնակարգող միջոցներ ձեռնարկելու իրավունք՝ անդամ պետության գազի ներքին շուկայում անդամ պետության տնտեսական կամ էներգետիկ անվտանգությանը սպառնացող վտանգի առկայության դեպքում։

Միության գազի ընդհանուր շուկայի ձեւավորումը պահանջում է հետեւյալ հիմնական խնդիրների լուծումը՝

Միության գազի ընդհանուր շուկայի ոչ խտրական հասանելիության ապահովում Միության գազի ընդհանուր շուկայի մասնակիցների համար.

Միության գազի ընդհանուր շուկայի մասնակիցների միջեւ բարեխիղճ մրցակցության զարգացման համար բարենպաստ պայմանների ստեղծում Միության գազի ընդհանուր շուկայում՝ գազի մատակարարման ոլորտում.

անցում գազի նկատմամբ գնագոյացման շուկայական մեխանիզմներին՝ Միության գազի ընդհանուր շուկայում.

գազի հաշիվներում ազգային արժույթների օգտագործման հարցի քննարկում.

բարենպաստ պայմանների ստեղծում, ներառյալ՝ համատեղ ծրագրերի իրականացումը՝ անդամ պետությունների գազափոխադրման համակարգերի զարգացման ոլորտում ներդրումների ներգրավման համար.

անդամ պետությունների տարածքներում տեղակայված եւ անդամ պետությունների միջեւ գազ տեղափոխելու համար օգտագործվող գազափոխադրման համակարգերի ազատ հզորությունների ոչ խտրական եւ թափանցիկ բաշխում Միության գազի ընդհանուր շուկայի մասնակիցների միջեւ՝ անդամ պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրման համակարգերի հասանելիության միասնական կանոններին համապատասխան.

գազին առնչվող անդամ պետությունների նորմերի ու չափանիշների եւ անդամ պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրող համակարգերի գործունեությունը կանոնակարգող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի միասնականացում.

տեղեկատվության փոխանակման ապահովում այնպիսի տեղեկատվության հիման վրա, որը ներառում է տեղեկություններ՝ գազի ներքին սպառման, ինչպես նաեւ անդամ պետությունների տարածքներում գազի փոխադրման եւ մատակարարման ոլորտում գնագոյացման վերաբերյալ, այդ թվում՝ գազի մեծածախ գնի, գազափոխադրման համակարգերով գազի փոխադրման սակագների վերաբերյալ։

IV. Միության գազի ընդհանուր շուկայի ձեւավորման փուլերը

Միության գազի ընդհանուր շուկայի ձեւավորումն իրականացվում է 3 փուլով՝ Պայմանագրի 83-րդ եւ 104-րդ հոդվածներով նախատեսված՝ Միության գազի ընդհանուր շուկայի ձեւավորման ծրագրի միջոցառումների կատարման միջոցով։

Հերթական փուլին անցնելու եւ դրա բովանդակության վերաբերյալ որոշումներն ընդունվում են Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի կողմից՝ անդամ պետությունների կողմից համաձայնեցված առաջարկների հիման վրա։

Առաջին փուլը (մինչեւ 2020 թվական) բնութագրվում է հետեւյալ հիմնական խնդիրների լուծմամբ՝

անդամ պետությունների՝ Միության գազի ընդհանուր շուկայի կանոնակարգման ոլորտի օրենսդրությունների ներդաշնակեցում.

անդամ պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրման համակարգերի ազատ հզորությունների վերաբերյալ տեղեկատվության հասանելիության եւ լրիվ բացահայտման ապահովում.

գազին առնչվող անդամ պետությունների նորմերի ու չափանիշների եւ անդամ պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրող համակարգերի գործունեությունը կանոնակարգող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի միասնականացում.

տեղեկատվության փոխանակման համակարգի ստեղծում՝ գազի ներքին սպառման, ինչպես նաեւ անդամ պետությունների տարածքներում գազի փոխադրման եւ մատակարարման ոլորտում գնագոյացման, այդ թվում՝ գազի մեծածախ գնի, գազափոխադրման համակարգերով գազի փոխադրման սակագների վերաբերյալ տեղեկություններ պարունակող տեղեկատվության հիման վրա.

անդամ պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրման համակարգերի հասանելիության միասնական կանոնների մշակում եւ համաձայնեցում.

անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից համաձայնեցված՝ Միության գազի ընդհանուր շուկայում գազի բորսային առեւտրի իրականացման կարգի սահմանում.

Միության գազի ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշռի ձեւավորում.

անդամ պետությունների միջեւ գազի փոխադրման ժամանակ ենթակառուցվածքային սահմանափակումների հայտնաբերում եւ դրանց վերացման վերաբերյալ առաջարկների մշակում։

Երկրորդ փուլը (մինչեւ 2021 թվական) բնութագրվում է հետեւյալ հիմնական խնդիրների լուծմամբ՝

մեկ կամ մի քանի ապրանքային բորսաների գործունեության ապահովում Միության այն տարածքներում, որտեղ կարող է իրականացվել գազի առեւտուր.

Միության գազի ընդհանուր շուկայի մասնակիցների համար գազի բորսային սակարկությունների ոչ խտրական հասանելիության ապահովում անդամ պետությունների ապրանքային բորսաներում.

Միության գազի ընդհանուր շուկայի մասնակիցների համար անդամ պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրման համակարգերի հասանելիության ապահովում անդամ պետությունների միջեւ գազի փոխադրման եւ մատակարարման նպատակներով՝ հաշվի առնելով Միության գազի համաձայնեցված ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշիռը.

տարբեր մեխանիզմների, այդ թվում՝ գազ մատակարարողների եւ գազ սպառողների երկարաժամկետ հայտերի օգտագործում՝ անդամ պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրման համակարգերի հզորությունների զարգացման համար.

անդամ պետությունների տնտեսավարող սուբյեկտների ներդրումային ակտիվության բարձրացում Միության գազի ընդհանուր շուկայում, այդ թվում՝ համատեղ ենթակառուցվածքային նախագծերի իրագործման միջոցով.

անդամ պետությունների համար խորհրդատվությունների անցկացում՝ երրորդ պետություններ գազի փոխադրման եւ մատակարարման հարցերով մատակարարման այն ուղղություններով, որոնցում անդամ պետությունները պոտենցիալ կերպով մրցակցում են կամ կարող են մրցակցել միմյանց հետ։

Երրորդ փուլ (ոչ ուշ, քան 2025 թվականի հունվարի 1-ը) բնութագրվում է հետեւյալ հիմնական հատկանիշներով՝

«Միության գազի ընդհանուր շուկայի ձեւավորման մասին» Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագիրն ուժի մեջ մտնելը.

Միության գազի ընդհանուր շուկայի մասնակիցների միջեւ անմիջականորեն կնքված պայմանագրերի միջոցով կամ բորսային սակարկությունների ժամանակ պահանջվող ծավալով եւ ուղղություններով ձեռք բերված գազի ազատ մատակարարման ապահովում.

Միության գազի ընդհանուր շուկայում գազի վաճառքի առեւտրային շահութաբերությունն ապահովող շուկայական գների պահպանում.

անդամ պետությունների կողմից համաձայնեցված որոշման ընդունում անդամ պետությունների տարածքներում դեպի գազի հավասարակամտաբեր գներ անցում կատարելու մասին։

V. Միության գազի ընդհանուր շուկայում գազի առեւտրի կառուցվածքը

Միության գազի ընդհանուր շուկայում գազի առեւտուրն իրականացվում է հետեւյալ ձեւերով՝

Միության գազի ընդհանուր շուկայի մասնակիցների միջեւ անմիջական պայմանագրերի կնքում՝ գազի մատակարարման վերաբերյալ.

բորսային սակարկությունների անցկացում։

Միության գազի ընդհանուր շուկայի մասնակիցների միջեւ գազի մատակարարման վերաբերյալ անմիջական պայմանագրեր կնքելու դեպքում պայմանագրերի կողմերն անդամ պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրման համակարգերի օպերատորների հետ համաձայնեցնում են գազի փոխադրման տեխնիկական հնարավորությունները եւ պայմանները։

Գազի բորսային սակարկություններն իրականցվում են Միության գազի ընդհանուր շուկայի մասնակիցների կողմից անդամ պետությունների ապրանքային բորսաներում, ինչպես նաեւ կարող են իրականացվել (ստեղծվելու դեպքում) Միության միջպետական բորսայում։ Միության միջպետական բորսայի ստեղծման եւ գործունեության անհրաժեշտությունը եւ պայմանները սահմանվում են անդամ պետությունների կողմից։

Անդամ պետությունը սահմանում է անդամ պետությունների ապրանքային բորսաներում գազի բորսային սակարկությունների իրականացման նպատակահարմարությունը, ինչպես նաեւ անդամ պետության այն ապրանքային բորսաների թիվը, որտեղ կարող են իրականացվել գազի բորսային սակարկությունները։

Միության գազի ընդհանուր շուկայի մասնակիցներն ունեն գազի բորսային սակարկությունների հասանելիության հավասար իրավունքներ Միության գազի ընդհանուր շուկայում։

Միության գազի ընդհանուր շուկայում գազի բորսային սակարկությունները ներառում են՝

գազի ֆիզիկական ծավալների սակարկություններ՝ գազի մատակարարման տարբեր ժամկետներով.

ֆինանսական գործիքների սակարկություններ՝ գազի մատակարարման ոլորտում։

Անդամ պետություններում գազի բորսային սակարկություններն իրականացվում են անդամ պետությունների լիազորված մարմինների կողմից համաձայնեցված՝ Միության գազի ընդհանուր շուկայում գազի բորսային առեւտրի իրականացման կարգին համապատասխան։

Գազի բորսային սակարկությունների օպերատորներն անդամ պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրման համակարգերի օպերատորների հետ համաձայնեցնում են այն գազի փոխադրման տեխնիկական հնարավորությունները եւ պայմանները, որի մասով անդամ պետության ապրանքային բորսայում իրականացվել կամ իրականացվելու է առքուվաճառքի գործառնություն։

Անդամ պետությունները մշակում եւ ընդունում են այն գազին առնչվող միասնական տեխնիկական չափանիշներ, որի մասով անդամ պետությունների ապրանքային բորսաներում իրականացվում են սակարկություններ։

VI. Գազի փոխադրման ծառայությունների նկատմամբ սակագնի գոյացման մեխանիզմները

Գազի փոխադրման ծառայությունների նկատմամբ սակագնի գոյացումն իրականացվում է անդամ պետությունների օրենսդրություններին համապատասխան։

Անդամ պետությունների գազային ոլորտի բնական մենաշնորհի սուբյեկտների ծառայությունների համար սակագնի գոյացումը պետք է բխի գազ սպառողների, գազ մատակարարողների եւ անդամ պետությունների բնական մենաշնորհի սուբյեկտների շահերի հավասարակշռության պահպանումից, ինչն ապահովում է սպառողների համար մատուցվող ծառայությունների հասանելիությունն ու դրանց որակի պատշաճ մակարդակը, արդյունավետ գործունեությունը եւ բնական մենաշնորհի սուբյեկտների զարգացումը։

VII. Ներդրումների ներգրավման մեխանիզմները

Անդամ պետություններն իրենց տարածքներում ստեղծում են բարենպաստ պայմաններ՝ գազային ոլորտում ներդրումային գործունեության իրականացման համար, ներառյալ՝ համատեղ նախագծերի իրագործումը։

Անդամ պետությունները համատեղ սահմանում եւ իրականացնում են իրենց համար ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող նախագծեր, այդ թվում՝ միջպետական մայրուղային (մագիստրալային) գազատարների հզորությունների եւ դրանց հետ տեխնոլոգիապես փոխկապակցված օբյեկտների զարգացումն ապահովող նախագծեր՝ գազ մատակարարողների եւ գազ սպառողների երկարաժամկետ հայտերի հիման վրա։ Անդամ պետությունները, որոնց տարածքներում իրականացվում են այդպիսի նախագծեր, ապահովում են դրանց իրականացման համար անհրաժեշտ կարգավորչական աջակցություն։

VIII. Տեխնիկական կանոնակարգումը

Անդամ պետություններում ապահովվում է գազային ոլորտի գործունեության հետ կապված տեխնիկական նորմերի ու չափանիշների միասնականացումը՝ Պայմանագրի X բաժնին համապատասխան։

IX. Միության գազի ընդհանուր շուկայի դիտանցումը եւ տեղեկատվական ապահովումը

Միության գազի ընդհանուր շուկայի դիտանցումը եւ տեղեկատվական ապահովումն իրականացվում են Միության միասնական տեղեկատվական համակարգի շրջանակներում, որը ստեղծվել է «Եվրասիական տնտեսական միության շրջանակներում տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների եւ տեղեկատվական փոխգործակցության մասին» արձանագրության 3-րդ կետին համապատասխան (Պայմանագրի 3-րդ հավելված)։

Անդամ պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրման համակարգերի օպերատորների եւ բորսային սակարկությունների օպերատորների միջեւ տեխնոլոգիական տեղեկատվության փոխանակումն իրականացվում է այն ծավալով, որն անհրաժեշտ է Միության գազի ընդհանուր շուկայում գազի անխափան փոխադրումն ու մատակարարումն ապահովելու համար։

Անդամ պետությունները ձեռնարկում են համաձայնեցված միջոցներ՝ անդամ պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրման համակարգերի օպերատորների կողմից տեղեկատվության թափանցիկության բարձրացման եւ բացահայտման համար։

X. Միության գազի ընդհանուր շուկայի կանոնակարգումը

Միության գազի ընդհանուր շուկայի կանոնակարգումն իրականացվում է Միության իրավունքի մաս կազմող միջազգային պայմանագրերին եւ ակտերին եւ անդամ պետությունների օրենսդրությանը համապատասխան եւ ներառում է՝

բնական մենաշնորհի սուբյեկտների գործունեության կանոնակարգում.
հակամենաշնորհային կանոնակարգում.
մաքսասակագնային կանոնակարգում.
տեխնիկական կանոնակարգում.
գազի բորսային սակարկությունների կանոնակարգում։

Միության գազի ընդհանուր շուկան կանոնակարգող մարմիններն են՝

Միության մարմինները.

անդամ պետությունների այն պետական մարմինները, որոնք լիազորված են իրականացնել պետական քաղաքականություն եւ կանոնակարգում գազի փոխադրման եւ մատակարարման ոլորտում.

Միության գազի ընդհանուր շուկայի այն մարմինները (անդամ պետությունների պետական մարմինների ղեկավարների խորհուրդներ, աշխատանքային խմբեր, հատուկ հանձնաժողովներ), որոնք կարող են ձեւավորվել անդամ պետությունների պետական մարմինների, Միության գազի ընդհանուր շուկայի մասնակիցների եւ Միության գազի ընդհանուր շուկայի ենթակառուցվածքային կազմակերպությունների փոխգործակցությունն ապահովելու համար։

Անդամ պետություններն իրականացնում են փոխգործակցություն՝ Միության գազի ընդհանուր շուկայի ձեւավորման եւ գործունեության նպատակներով։

Անդամ պետությունների՝ գազի փոխադրման եւ մատակարարման ոլորտում պետական քաղաքականություն եւ կանոնակարգում իրականացնելու համար լիազորված պետական մարմինների փոխգործակցությունը միմյանց եւ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի հետ իրականացվում է հետեւյալ հիմնական ուղղություններով՝

Միության գազի ընդհանուր շուկան կանոնակարգող՝ անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերի եւ Միության մարմինների ակտերի մշակում.

Միության գազի ինդիկատիվ (կանխատեսվող) հաշվեկշռի մշակում. անդամ պետությունների օրենսդրությունների ներդաշնակեցում անդամ պետությունների տարածքներում գազի փոխադրման եւ մատակարարման ոլորտում՝ Միության գազի ընդհանուր շուկան կանոնակարգող ակտերին համապատասխան.

Միության գազի ընդհանուր շուկայի գործունեության դիտանցման տվյալների վերլուծություն.

անդամ պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրման համակարգերի հասանելիության միասնական կանոնների կիրառում։

Միության գազի ընդհանուր շուկայի շրջանակներում ենթակառուցվածքային կազմակերպությունները փոխգործակցում են միմյանց հետ աշխատանքի համակարգման նպատակով։

Անդամ պետությունների տարածքներում տեղակայված գազափոխադրման համակարգերի օպերատորների փոխգործակցությունն իրականացվում է հետեւյալ ուղղություններով՝

տեխնոլոգիական տեղեկատվության տեղեկատվական փոխանակում, որն անհրաժեշտ է Միության գազի ընդհանուր շուկայում գազի անխափան փոխադրումն ու մատակարարումն ապահովելու համար.

գազափոխադրման համակարգերի այնպիսի տարրերի վերանորոգման ժամանակացույցների համաձայնեցում, որոնք ազդում են Միության գազի ընդհանուր շուկայի մասնակիցների միջեւ գազի փոխադարձ առեւտրի ժամանակ օգտագործվող միջպետական մագիստրալային գազատարների աշխատանքի թողունակության եւ հուսալիության վրա.

փոխադարձ տեղեկացում Միության գազի ընդհանուր շուկայի մասնակիցների միջեւ՝ գազի փոխադարձ առեւտրի վրա ազդող՝ գազափոխադրման համակարգերի զարգացման ծրագրերի վերաբերյալ։

XI. Միության գազի ընդհանուր շուկան կանոնակարգող ակտերը

Միության գազի ընդհանուր շուկան կանոնակարգող ակտերի համակարգը կազմում են՝

Պայմանագիրը.

«Միության գազի ընդհանուր շուկայի ձեւավորման մասին» Միության շրջանակներում կնքվող միջազգային պայմանագիրը, որը կնքում են անդամ

պետությունները՝ Պայմանագրի 83-րդ հոդվածի 3-րդ կետին եւ 104-րդ հոդվածի 5-րդ կետին համապատասխան.

Միության մարմինների ակտերը, որոնք մշակվում են Պայմանագրի 83-րդ հոդվածի 2-րդ կետով եւ 104-րդ հոդվածի 4-րդ կետով նախատեսված՝ Միության գազի ընդհանուր շուկայի ձեւավորման ծրագրին համապատասխան եւ կանոնակարգում են Միության գազի ընդհանուր շուկայի սուբյեկտների գործունեությունը.

անդամ պետությունների նորմատիվ իրավական ակտերը:

Միության գազի ընդհանուր շուկան կանոնակարգող ակտերի մշակման ցանկը, հաջորդականությունը եւ ժամկետները սահմանվում են Պայմանագրով, սույն հայեցակարգի IV բաժնով եւ դրա հիման վրա մշակվող՝ Միության գազի ընդհանուր շուկայի ձեւավորման ծրագրով: